Բանալի բառեր: Սփյուռք, տեսություն, մեթոդաբանություն, չափանիշներ, հայկական սփյուռք:

THE PROBLEMS OF STUDYING THE ARMENIAN DIASPORA

Rimma Pogosyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor,
Senior Researcher,
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

SUMMARY

In this article examines in detail the scientific category of the «diaspora», the origins of its emergence and involvment in to scientific circulation. As well as, on the bases of foreign and Russian-language scientific literature, the criteria for defining an ethnic community as a diaspora are developed. The basic definitions of this concept and the interdisciplinary area of its implementation in various studies are presented. Refering to the indicated theoretical and methodological approaches, in some more detail the «classic» example of the Armenian diaspora, the origins of its formation, spreadout in the world and the quantitative composition of Armenian communities and settlements are considered.

Keywords. Diaspora, theory, methodology, criteria, Armenian diaspora.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Աշոտ Թավադյան
տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հայկական տնտեսագիտական հանդեսի
գլխավոր խմբագիր

Եվրասիական տնտեսական միության ձևավորումը փոխել է աշխատանքային միգրացիայի իրավիճակը անդամ պետություններում: Աշխատանքային միգրացիայի օրենսդրության ազատականացումը էապես մեծացրել է Հայաստանից աշխատողների միգրացիոն հնարավորությունները դեպի ԵԱՏՄ երկրներ, հատկապես հաշվի

առնելով շուկայի մեծությունը և գրավչությունը դեպի Ռուսաստան: Պայմանավորված կորոնավիրուսի համավարակով տնտեսական իրավիճակի վատթարացումը բացասական է անդրադառնում միգրացիոն հնարավորությունների վրա: Սակայն Հայաստանի համար աշխատանքային միգրացիայի հիմնական ուղղությունը մնում է Ռուսաստանը: Միգրանտների ամենամեծ քանակը ԵԱՏՄ-ից, որոնք ժամանում են աշխատելու նպատակով Ռուսատան ըստ 2015-2017 թվականների հանդիսանում են Ղրղզստան և Հայաստանի քաղաքացիները: (աղյուսակ1).[1]

Աղյուսակ 1. ԵԱՏՄ քաղաքացիներ, որոնք ժամանում են Ռուսաստան աշխատելու նպատակով

	01.10.2015	01.10.2016	01.10.2017
Հայաստան	263 088	280 410	304 002
Բելառուս	94 012	128 989	155 750
Ղազախստան	49 624	47 846	56 777
Ղրղզստան	355 431	424 172	472 153

Աշխատանքային միգրացիայի ամենաբարձր ձգտումը ունեն այն աշխատողները, որոնք չունեն բարձր որակավորում: Եկամուտի ցածր մակարդակը կարող է նույնպես աշխատանքային միգրացիայի պատճառ հանդիսանալ: Մոտիվացված և բարձր որակավորում ունեցող աշխատողների մի մասը նույնպես հակված են տեղափոխվել Ռուսաստան, որտեղ իրենք կարող են ստանալ ավելի բարձր աշխատավարձ: Միգրացիոն հոսքերի գնահատականը կարող է լինել հիմնականում մոտավոր: Համաձայն ՌԴ պետական միգրացիոն ծառայության փորձագիտական գնահատականների և ելնելով սոցիալական հետազոտությունների վրա 1988-ից մինչև 2001թ. Հայաստանից մեկնել են 1.1 մլն մարդ: Մինչև 2007թ. Հայաստանից մեկնում էին 25 հազար մարդ գումարած 60 հազար սեզոնային միգրանտներ, որոնք հիմնականում աշխատում են Ռուսաստանում:

[1] Миграционная политика: диагностика, вызовы, предложения // Центр стратегических разработок «Человеческий капитал». М., 2018. – 45 с.

Վերջին 5 տարում միգրանտների միջին քանակի գնահատականն է տարեկան մոտ 30 հազար մարդ: Միգրացիայի պատճառներից անհրաժեշտ է նշել տնտեսական, քաղաքական, հոգեբանական և մշակութային գործոնները: Հայաստանի միգրանտների մոտ 80%-ը մեկնում են Ռուսատան:

Միջերկրային միգրացիոն հոսքերի գնահատման վրա ազդում է անորոշության գործոնը: Դա պայմանավորված է նրանով, որ միգրացիոն հոսքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ոչ միշտ են համապատասխանում իրականությանը, նաև նրանով որ վիճակագրական տեղեկատվությունը տարբերվում է արտագաղթող և ներգաղթող երկրներում: Բացի դրանից կորոնավիրուսի համաճարակը և Արցախով պայմանավորված ռազմական իրավիճակը մեծացրել են անորոշության մակարդակը:

Տեղաշարժման ժամանակակից պայմաններում տարածքը չի հանդիսանում զգալի գործոն միգրացիայի համար: Հիմնականում մարդիկ որոշում են տեղափոխվել ելնելով երկրի կենսամակարդակից և սփյուռքի ներուժից, սոցիալական մակարդակից և այլ գործոններից: Այսպիսով անհրաժեշտ է գնահատել ինչքանով են ՀՀ Միգրանտների համար գրավիչ ԵԱՏՄ այլ երկրները, հատկապես Ռուսաստանը, որը ունի ամենամեծ ներուժը ԵԱՏՄ-ում: Համապատասխանաբար պետք է գնահատվեն թե ինչպես է աշխատանքային միգրացիան անդրադառնում տրանսֆերտների վրա:

Հայկական սփյուռքի ազդեցությունը գնահատող հիմնական 2 գործոնն են սփյուռքի քանակը և նրա կենսամակարդակը, որոնք առավելապես են ազդում Հայաստանից մեկնող միգրացիայի վրա: Դա հիմնականում արտահայտվում է Հայաստանի և ԵԱՏՄ երկրների հետևյալ տնտեսական ցուցանիշների վրա՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ, աշխատավարձի մակարդակ, գործազրկություն, արդյունաբերության մակարդակը ՀՆԱ-ում:

Վերջին տարիներին հայկական սփյուռքը Ռուսաստանում տարբեր գնահատականներով զգալի աճել է և կազմում է մոտ 3 մլն մարդ, որը

համադրելի է Հայաստանի բնակչության հետ: Բելառուսում և Ղազախստանում սփյուռքը կազմում է համապատասխանաբար մոտ 30 հազար մարդ: Տվյալ երկրներում սփյուռքի աճը և ավելի բարձր կյանքի կենսամակարդակը ազդում են միգրացիայի վրա:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն Հայաստանում ավելի քան 2 անգամ ցածր է քան Ռուսաստանում: Ռուսաստանում մեկ շնչի վրա ՀՆԱ-ի ցուցանիշը ընդհանուր առմամբ նաև բնութագրում է հայկական սփյուռքի ներուժը այդ երկրում:

Գծապատկեր 1. Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ԵԱՏՄ երկրներում[1]



Միջին աշխատավարձը ԵԱՏՄ երկրներում կազմում է՝ Ռուսաստանում 628 դոլար, Ղազախստանում՝ 504, Բելառուսում՝ 540, Հայաստանում՝ 362 և Ղրղզստանում 208 դոլար:[2] Ինչպես տեսնում ենք այս ցուցանիշով Հայաստանը ևս զգալի զիջում է ԵԱՏՄ հիմնական գործընկերներին: Միգրացիայի վրա հատկապես բացասական է անդրադառնում գործազրկության մակարդակը: 2020թ. Ռուսաստանում այն կազմել է 5.7%, Ղազախստանում 6.1%,

[1] "World Economic Outlook Database, October 2020". World Economic Outlook. International Monetary Fund. October 2020. Retrieved 13 October 2020.

[2] ԵԱՏՄ երկրների վիճակագրական ծառայությունների տվյալներ

Բելառուսում 5.3%, Հայաստանում 20.2% և Ղրղզստանում 7.9%:[1] Հայաստանում այդ մակարդակի գործազրկությունը իհարկե մեծացնում է Հայաստանից ԵԱՏՄ երկրներ միգրացիոն հոսքերը: Առավել ևս, որ ԵԱՏՄ պայմանագիրը ապահովում է աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժը Միությունում: Համապատասխանաբար միջին աշխատավարձի ցածր մակարդակը, աշխատանքի գտնելու հնարավորության բացակայությունը ավելի ուժեղ է ազդում միգրացիոն հոսքերի աճի վրա:

Արդյունաբերության մակարդակի հարաբերակցությունը ՀՆԱ-ում կազմում է Ռուսաստանում՝ 37.2%, Ղազախստանում՝ 33.0%, Բելառուսում՝ 31.3%, Ղրղզստանում 27.6% և Հայաստանում 24.3%:[2] Ինչպես տեսնում ենք նույնիսկ այս գործոնով մենք զիջում ենք ԵԱՏՄ այլ երկրներին: Տրանսֆերտների վրա առաջին հերթին ազդում են միջին աշխատավարձը, հատկապես այն ոլորտներում, որտեղ գլխավորապես աշխատում են միգրանտները: Տրանսֆերտների վրա ազդում է նաև միգրանտների քանակը և փոխարժեքների դինամիկան: Աշխատանքային միգրացիայի ուղղակի հետևանքը այն է, որ այլ երկրներից դրամական փոխանցումները Հայաստանում ունեն մեծ տնտեսական և սոցիալական դեր: Հատկապես մասնավոր դրամական փոխանցումները ունեն զգալի դեր Հայաստանում աղքատության կրճատման գործում: 2019թ.-ին դեպի Հայաստան են ուղարկվել 1.49 մլրդ դոլար տրանսֆերտներ: Դա կազմում է ՀՆԱ-ի 10.9%-ը: 2020թ.-ին տրանսֆերտները կրճատվել են 12%-ով, որի հիմնական պատճառն է աշխատանքային միգրացիայի մակարդակի զգալի կրճատումը, ինչը համաճարակի և մասամբ ռուսական ռուբլու փոխարժեքի նվազման հետևանք է:

Տրանսֆերտների մոտ 65%-ը ստացվում է Ռուսաստանից: Հայաստանի և ԵԱՏՄ երկրների սոցիալ-տնտեսական հարաբերությունները, մասնավորապես Հայաստանի և Ռուսատանի միջև, էապես ազդում են տրանսֆերտների ծավալների վրա: Հայաստանում տրանսֆերտների դինամիկան ներկայացված է գծապատկեր 2-ում:

[1] Համաշխարհային բանկի տվյալներ
[2] Համաշխարհային բանկի տվյալներ

Գծապատկեր 2. Հայաստանի տրանսֆերտների դինամիկան (մլն դոլար)[1]



Հայատանի անդամակցությունը ԵԱՏՄ էապես մեծացրել է հայկական սփյուռքի ներուժի և այլ գործոնների դերը, որոնք անմիջապես ազդում են միգրացիայի և տրանսֆերտների վրա: ԵԱՏՄ Պայմանագրի 4-րդ հոդվածում որպես ԵԱՏՄ հիմնական նպատակներ նշված են՝

- անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ ի նպաստ դրանց բնակչության կենսամակարդակի բարձրացման շահերի,
- Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի միասնական շուկա ձևավորելու ձգտումը,
- համաշխարհային տնտեսության պայմաններում բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը և ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումը:[2]

Տվյալ ձևակերպումը ուղակի ազդեցություն ունի միգրացիոն հոսքերի մեծացման վրա: Հայաստանի համար աշխատանքային միգրացիան այդ թվում «ուղեղների արտահոսքը» ունի ինչպես

---

[1] ՀՀ Կենտրոնական բանկ, https//www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/Remittances.xls

[2] «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր, https://www.arlis.am/documentview.aspx?docID=95203

բացասական սոցիալական հետևանքներ՝ բարձր որակի կադրերի կորուստ, այդ կադրերի պատրաստման վրա միջոցների կորուստ, հատկապես եթե այդ կադրերը չեն վերադառնում, այնպես էլ դրական՝ ռեէմիգրացիայի դեպքում միգրանտները ձեռք են բերում արտասահմանյան փորձ: Միգրանտները հաճախ սովորում են արդյունավետ ծրագրեր, բարձրացնում են իրենց որակը, բարելավում են իրենց ընտանիքների կենսամակարդակը, նաև նվազում է ճնշումը աշխատանքային շուկայում: ԵԱՏՄ աշխատանքային շուկայի ձևավորումը դրական է անդրադառնում աշխատանքային ներուժի աճի, աշխատողների հնարավորությունների և մրցունակության վրա:

Դրա հետ մեկտեղ առկա է սահմանափակում, որը դժվարացնում է աշխատուժի ազատ տեղաշարժը ԵԱՏՄ-ում: Դա աշխատանքային միգրանտի համար ոչ բավարար կենսաթոշակային հարցերի լուծումն է: Զսպող գործոն է հանդիսանում նաև ԵԱՏՄ երկրներում տարբեր կենսաթոշակային համակարգերի ձևավորումը: Հիմնական տարբերությունը կայանում է ֆինանսավորման, թոշակային միջոցների բաշխման մեջ: Բացի դրանից թոշակային համակարգերը պայմանավորվում են կառուցվածքային՝ թոշակային տարիքով, թոշակի աղբյուրներով և այլ գործոններով:

Ելնելով ԵԱՏՄ պայմանագրից անհրաժեշտ է ձևավորել ԵԱՏՄ տարածքում կենսաթոշակային այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տալիս լիարժեք ապահովել թոշակային իրավունքները, որոնք կախված չեն թոշակառուի ապրելու երկրից:[1]

Կրթության տեսանկյունից դիպլոմների ճանաչման հարցը հիմնականում պրակտիկորեն լուծված է, սակայն առկա են մասնագիտություններ, որոնք անհրաժեշտ է հաստատել ԵԱՏՄ այլ երկրներում: Դրանք մանկավարժական, բժշկական, իրավաբանական

[1] О пенсионном обеспечении трудящихся государств-членов Евразийского экономического союза (ЕАЭС) / Министерство труда и социальной защиты. [Электронный ресурс]. – Режим доступа: http://intrude.gov.by/ru/news_ru/view/-o-pensionnom-obespechenii-trudjaschixsja-gosudarstv-chlenov-evrazijskogo-ekonomicheskogo-sojuza-eaes-_3001/. – Дата доступа: 03.10.2018.

մասնագիտություններն են: Գիտական աստիճանների և կոչումների փաստաթղթերի համար համապատասխան տվյալ երկրի օրենսդրության նույնպես անհրաժեշտ է ճանաչման գործընթաց:

Եվրասիական տնտեսական միությունը հիմնվել է 2015թ. հունվարի 1-ին Եվրազեսի հիման վրա: Մինչև ԵԱՏՄ ձևավորումը 2009թ. դեկտեմբերի 11-ին Եվրազես երկրները ստորագրել են կրթության ոլորտում համագործակցության մասին համաձայնություն, որի հիման վրա կողմերը իրականացնում են համաձայնեցված գործողություններ, հետևողականորեն լայնացնելով համագործակցությունը կրթության ոլորտում, որոնք ուղղված են ԵԱՏՄ տարածքում ընդհանուր կրթական տարածության ձևավորմանը:[1] Համաձայնությունը ենթադրում էր կրթական կազմակերպությունների ուղղակի կապերի և ակադեմիական շարժողականության աջակցություն: Սակայն այդ համաձայնության մեջ ներգրաված դրույթները չեն գտել իրենց տեղը ԵԱՏՄ պայմանագրում:

Ընդհանուր առմամբ ստեղծված իրավիճակը նպաստում է միգրացիոն գործընթանցների ուժեղացմանը: Սակայն ըստ երկրների իրավիճակը տարբերվում է: Հատկապես համաճարակից և պատերազմից հետո Հայաստանից միգրացիան կարող է զգալի աճել, հիմնականում դեպի Ռուսատան՝ հաշվի առնելով ԵԱՏՄ պայմանագրի դրույթները և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի, աշխատավարձի, գործազրկության մակարդակների տարբերությունը:

Միգրացիոն ուղղությունները ենթարկվում են որոշակի փոփոխությունների: Սակայն Հայաստանի համար միգրացիայի ավանդական ուղղություններն են Ռուսաստանը, ԱՄՆ-ն և Արևմտյան Եվրոպան: Դրա հետ մեկտեղ ելնելով վերոհիշյալ գործոններից ԵԱՏՄ այլ երկրները վերջին ժամանակներում նույնպես դառել են գրավիչ Հայաստանի միգրանտների համար: Մասնավորապես դրան բերել է

[1] Соглашение о сотрудничестве государств - членов Евразийского экономического сообщества в области образования (Санкт-Петербург, 11 декабря 2009 г.)

աշխատանքի տեղավորման գործընթացի պարզեցումը, աշխատավորների որոշ խմբերի համար քաղաքացիության ստացումը, բարձրագույն կրթության ստացման հնարավորությունների ընդլայնումը, պարտադիր և բժշկական ապահովագրության հնարավորությունը և որոշ սոցիալական և կենսաթոշակային իրավունքների ապահովումը: Քանի որ Ռուսաստանը աշխատավարձի մակարդակով և այլ գործոններով էապես գերազանցում է ԵԱՏՄ այլ երկրներին, մասնավորապես Հայաստանին, աշխատանքային ռեսուրսների միգրացիան դառնում է հիմնախնդիր տվյալ երկրների համար: Մոտակա ժամանակաշրջանում մարդկային կապիտալի կորուստը կարող է բերել Հայաստանում տնտեսական աճի նվազմանը:

Գծապատկեր 3. Հայաստան մեկնողների և ժամանողների քանակը (հազար մարդ)[1]



ԵԱՏՄ անդամակցությունից հետո Հայաստանի տնտեսական իրավիճակի որոշակի բարելավումը դրական է ազդում Հայաստանի տնեսական ներուժի և միգրացիոն սալդոյի վրա: Դա միգրացիայի վրա ազդող կարևոր գործոն է: ԵԱՏՄ Պայմանագրի 4-րդ հոդվածի՝ «Միության հիմնական նպատակները» լիարժեք կատարումը

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/en/?nid=14

միգրացիոն սալդոյի բարելավման տեսանկյունից հիմնուղին է: ԵԱՏՄ երկրների ներուժի բարձրացման համար առաջնահերթ է համագործակցության և տնտեսության արդիականացման ճանապարհային քարտեզի մշակումը՝ հաշվի առնելով Ռուսաստանի արդյունաբերական քաղաքականության մասին օրենքի և ԵԱՏՄ պայմանագրի դրույթները:[1] Առկա են համագործակցության նախադրյալներ ռազմական արդյունաբերության, նանոտեխնոլոգիաների, էներգետիկայի, մետաղաձուլական արդյունաբերության, մեքենաշինության, էլեկտրոտեխնիկայի, գործիքաշինության, քիմիական և թեթև արդյունաբերության, գյուղատնտեսության, դեղագործության և տուրիզմի զարգացման համար: Հատկապես կոոպերացիան, իրական տնտեսական համագործակցությունը հավասարեցնում է երկրի տնտեսական ներուժի գործոնը, բարձրացնում է զբաղվածության մակարդակը և նվազեցնում է միգրացիային նպաստող գործոնների ազդեցությունը:

Համատեղ ձեռնարկությունների ստեղծման համար անհրաժեշտ է նաև մեծացնել երկրների միջև տնտեսական հարաբերակցությունների թափանցիկությունը: Դրա համար պետք է կոնկրետացնել ԵԱՏՄ պայմանագրի 69՝ Թափանցիկություն հոդվածը: Դրան կնպաստի նաև ԵԱՏՄ երկրների տնտեսական հարաբերակցությունների թվայնացումը:

ԵԱՏՄ երկրների միջպետական գիտական հետազոտությունների հիմնադրամի ձևավորումը հնարավորություն կստեղծի ապահովել հիմնարար և առաջնահերթ կիրառական հետազոտությունների համապատասխան ֆինանսավորումը, ինչպես նաև կնպաստի միջպետական նորարարական և վենչուրային ծրագրերի ստեղծմանը և թվայնացման հիմնախնդիրների լուծմանը:

2018թ. Հայաստանում տեղի ունեցավ ԱՊՀ երկրների գիտնականների համաժողովը, որի ժամանակ ընդունվեց դեկլարա-

[1] Федеральный закон от 31 декабря 2014 г. N 488-ФЗ "О промышленной политике в Российской Федерации" (с изменениями и дополнениями)

ցիա, որի դրույթները առաջին հերթին պետք է կիրառվեն ԵԱՏՄ-ում:[1] Ձևավորվող հիմնադրամի կիրառական հետազոտությունները, նորարարական արդյունքները կնպաստեն ԵԱՏՄ տնտեսական ներուժի և զբաղվածության մակարդակի բարձրացմանը:

Էներգակիրների գների համաձայնեցումը և արտահանման մաքսատուրքի վերացումը ուղղակի նպաստում է ԵԱՏՄ բոլոր երկնեիր տնտեսական աճին: Դա հնարավորություն է ստեղծում հատկապես փոքր տնտեսությամբ ԵԱՏՄ անդամ երկրին ավելի կարճ ժամանակահատվածում իրականացնել իր աճի ներուժի:

Կոոպերացիան, տնտեսության արդիականացումը և ԵԱՏՄ երկրների մրցունակության աճը առանցքային գործոններ են ԵԱՏՄ երկրների զարգացման համար: Այդ երեք գործոնները կնպաստեն ՀՆԱ-ի, զբաղվածության, ինչպես նաև հատկապես դեպի Ռուսաստան պատրաստի արտադրանքի արտահանման աճին:

Հայաստանի տնտեսական աճի համար զգալի դեր կունենա ապրանքների ազատ տեղաշարժը և կազմակերպությունների հնարավորությունը մասնակցել պետական գնումների մրցույթներին ամբողջ ԵԱՏՄ տարածքում: ԵԱՏՄ երկրների տնտեսության արդիականացումը ու կոոպերացիայի ծրագրի ձևավորումը և հստակ կատարումը դրական կանդրադառնա միգրացիոն սալդոյի, գործազրկության մակարդակի վրա:

Մրցույթների մասնակցության հնարավորությունը ամբողջ ԵԱՏՄ տարածքում կբերի նրան, որ միգրացիայի վրա առաջին հերթին կազդի ոչ թե սփյուռքի ներուժը, այլ այս կամ այն աշխատանքի կոնկրետ պահանջարկը: Դա հանրավորություն կտա աշխատան-քային ռեսուրսների միգրացիայից անցում կատարել ավելի առաջադեմ աշխատանքի արտահանմանը, որը ուղղակի փոխկապակցված է ՀՆԱ-ի աճի հետ: Տվյալ մոդելը, երբ ստորագրվում են պայմանագրեր տարբեր երկրների կազմակերպությունների միջև՝

[1] Декларация II Форума ученых СНГ, https://cis.minsk.by/ news/10019/po- itogam-raboty-ii-foruma-ucenyh-sng-v-erevane-prinata-deklaracia

մասնավորապես շինարարության ոլորտում, կարգավորում է աշխատուժի շարժը և նպաստում է տնտեսության զարգացմանը:

Կառավարությունը պետք է կազմակերպչական և օրենսդրական առումով նպաստի աշխատանքի արտահանումը համակարգող համապատասխան կազմակերպությունների ձևավորմանը: Դա կարևոր է Հայաստանի համար, քանզի փոքր բնակչությամբ երկրի աշխատանքային ռեսուրսներին առանց պետական աջակցության դժվար է մրցակցել այլ երկրների խոշոր ձեռնարկությունների հետ:

Հաշվի առնելով մեր շրջանի մարտահրավերները առաջնային խնդիր է դառնում տնտեսական և ռազմական ինտեգրացիայի միաձուլումը: Առանց դրա խնդրահարույց է ապահովել տնտեսական աճը ռազմաարդյունաբերական ոլորտի հաշվին, ինչը կարևորագույն խնդիր է Հայաստանի համար: Ռազմաարդյունաբերական համալիրը ոչ միայն բարձրացնում է երկրի անվտանգության աստիճանը, այլ նաև կարևորագույն դեր ունի զբաղվածության աճի համար, հատկապես այն երկրներում որտեղ բարձր է գործազրկության մակարդակը:

ԵԱՏՄ-ն ստեղծում է իրական հնարավորություններ հայաստանի տնտեսական ներուժի աճի համար, հատկապես ռազմաարդյունաբերական արտադրանքներ արտադրելու տեսանկյունից: Ինչքանով հնարավորություն կլինի այդ ներուժը իրագործել կախված է իրականացվող հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականության արդյունավետությունից, ինչպես նաև Հայաստանի և այլ գործընկեր երկրների միջև խնդիրների հստակ լուծումից: Հիմնվելով մարդկային և նորարարական կապիտալի վրա՝ դա հնարավորություն կստեղծի հասնել էական փոփոխությունների տնտեսական աճը ապահովելու տեսանկյունից:

Արդյունավետ տնտեսական համագործակցությունը անհրաժեշտ է Հայաստանի համար, քանզի փոքր տնտեսությամբ երկրները, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը որպես կանոն չեն կարողանում իրականացնել ժամանակակից տնտեսական վերափոխումներ

առանց տարողունակ շուկայի, որտեղ սպառվում է հատկապես իր պատրաստի արտադրանքը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից պայմաններում տարածքը չի հանդիսանում զգալի գործոն միգրացիայի համար: Մարդիկ որոշում են տեղափոխվել ելնելով երկրի կենսամակարդակից և սփյուռքի ներուժից, սոցիալական մակարդակից: Հայկական սփյուռքի ազդեցությունը գնահատող հիմնական 2 գործոնն են սփյուռքի քանակը և նրա կենսամակարդակը: Դա հիմնականում արտահայտվում է Հայաստանի և ԵԱՏՄ երկրների հետևյալ տնտեսական ցուցանիշների վրա՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ, աշխատավարձի մակարդակ, գործազրկություն, արդյունաբերության մակարդակը ՀՆԱ-ում: Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ էապես մեծացրել է հայկական սփյուռքի ներուժի և այլ գործոնների դերը, որոնք անմիջապես ազդում են միգրացիայի և տրանսֆերտների վրա: Հաշվի առնելով ԵԱՏՄ պայմանագրի դրույթները և սոցիալ–տնտեսական ցուցանիշների տարբերությունը, ինչպես նաև համաճարագից և պատերազմից հետո ստեղծված իրավիճակը Հայաստանից միգրացիան կարող է զգալի աճել:

Բանալի բառեր: Սփյուռքի ներուժ, կենսամակարդակ, մեկ շնչին ընկնող ՀՆԱ, աշխատավարձ, գործազրկություն, արդյունաբերության մակարդակ:

О ПОТЕНЦИАЛЕ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

Ашот Тавадян

доктор кономических наук, профессор

главный редактор Армянского экономического журнала

РЕЗЮМЕ

В современных условиях расстояние не является значимым фактором для миграции. Люди планируют переезд, исходя из

привлекательности страны и потенциала диаспоры, в которую переезжает мигрант, социальных связей. Основные факторы, характеризующие потенциал армянской диаспоры и влияющие на миграцию в Армении являются численность и уровень благосостояния армянской диаспоры в странах ЕАЭС. Это находит свое отражение в соотношении следующих показателей в Армении и в странах Союза: ВВП на душу населения, уровень заработной платы, безработица, уровень промышленности в ВВП. Членство Армении в ЕАЭС существенно усилило влияние потенциала армянской диаспоры и факторов. В целом сложившаяся ситуация способствует интенсификации процессов миграции. Особенно после пандемии и военной ситуации в Армении процесс оттока населения может усилиться.

Ключевые слова: потенциал диаспоры, уровень жизни, ВВП на душу населения, заработная плата, безработица, уровень промышленности.

ABOUT THE POTENTIAL OF THE ARMENIAN DIASPORA IN THE RUSSIAN FEDERATION

Ashot Tavadyan
Doctor of Economics, Professor
Chief Editor of the Armenian Economic Journal

SUMMARY

Distance is not a significant factor for migration in modern times. People are moveing based on the attractiveness of the country and the potential of its diaspora, and social ties. The main factors characterizing the potential of the Armenian diaspora and influencing migration in Armenia are the number and the level of well-being of the Armenian diaspora in the EAEU countries. This is reflected in the ratio of the main economic indicators in Armenia and in the countries of the Union. Armenia's membership in the EAEU has significantly increased the influence of the potential of the Armenian diaspora. In general, the current situation contributes to the intensification of migration processes. The process of population migration may intensify especially after the pandemic and the military situation in Armenia.

Keywords: Potential of the Diaspora, Standard of Living, GDP per capita, Wages, Unemployment, Level of Industry.